ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/50, 10.04.2020թ.

Բողոք բերող անձ՝ «ՊԵԼԵԿԱ» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-ՃՈ-2020/Ա-42» գնանշման հարցում

Գնման առարկան՝ Կարճ հաղորդագրությունների /SMS/ ուղարկման ծառայությունների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-ՃՈ-2020/Ա-42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին անվավեր ճանաչելու գնահատող հանձնաժողովի կողմից 2020 թվականի ապրիլի 6-ին հաստատված պայմանագիր կնքելու մասի որոշումը և հանձնաժողովի 06.04.2020թ-ի 2-րդ արձանագրության 5-րդ և 6-րդ կետերով կայացրած որոշումները:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

10 ապրիլի 2020թ
Ref: 10-04-20/01

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին
(հասցե՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փ. 1)

Բողոք ներկայացնող անձ՝
«ՊԵԼԵԿԱ» ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Աֆրիկյան
(հասցե՝ ք. Երևան, Միկոյան 7/24,
ՀՎՀՀ՝ 00910673, «Ինեկոբանկ» ՓԲԸ, h/h 2052022212011001
info@peleka.am, +37491207285)

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն
(հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 130)

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-ՃՈ-2020/Ա-42,
Կարճ հաղորդագրությունների /SMS/ ուղարկման
ծառայությունների մատուցում

ՀՀ ոստիկանությունը (այսուհետ՝ Պատվիրատու) Կարճ հաղորդագրությունների /SMS/ ուղարկման ծառայությունների մատուցման նպատակով ս. թ. մարտի 26-ին կազմակերպել է ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-ՃՈ-2020/Ա-42 ծածկագրով գնանշման հարցման մրցույթ: Ընթացակարգին մասնակցել է նաև մեր կազմակերպությունը՝ «Պելեկա» ՍՊԸ-ն: Մրցույթին առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ն: Հրավերի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի համաձայն՝

Կատարողը պետք է երաշխավորի, որ ծառայությունների մատուցման իրականացման համար ունի բոլոր իրավական փաստաթղթերը, կարող է ապահովել ամբողջական ծածկույթ ՀՀ տարածքում և ունի SMS հաղորդագրությունների ուղարկման կնքված պայմանագրեր ՀՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ:

Կատարողը պետք է երաշխավորի, որ ծառայությունը մատուցվելու է բացառապես ՀՀ տարածքում գտնվող սերվերների և ենթակառուցվածքի միջոցով:

Կատարողի կողմից մատուցված ծառայությունների մասով ուղարկված SMS հաղորդագրությունների քանակական հաշվարկը պետք է իրականացվի բացառապես ՀՀ բջջային օպերատորների SMSC-ի կողմից տրամադրված առցանց հաշվետվության միջոցով, որը Պատվիրատուն պետք է ստանա վեր նշված Պատվիրատուի առկա համակարգի կարգավորմամբ SMS հաղորդագրությունների հաշվետվությունների ստացման առցանց ծրագրային ինտերֆեյս API միջոցով:

«Սպրինտ Ուեյ» ՍՊԸ-ն չունի SMS հաղորդագրությունների ուղարկման կնքված պայմանագրեր ՀՀ գործող բոլոր բջջային օպերատորների հետ, ինչպես նաև չունի ՀՀ տարածքում գտնվող սերվերներ և ենթակառուցվածք ծառայություն մատուցելու համար:

Մրցույթի հրավերի 7.3 կետով սահմանում է, որ «Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-ՃՈ-2020/Ա-42 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին պարտավորեցնել անվավեր ճանաչելու գնահատող հանձնաժողովի կողմից 2020 թվականի ապրիլի 6-ին հաստատված պայմանագիր կնքելու մասին որոշումը և հանձնաժողովի 06.04.2020թ-ի 2-րդ արձանագրության 5-րդ և 6-րդ կետերով կայացրած որոշումներն:

Կից ներկայացնում եմ՝

- բողոքարկման վճարի անդորրագրի պատճենը,
- ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-ՃՈ-2020/Ա-42 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի ընթացակարգի հայտարարությունը,
- ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՄՍ-ՃՈ-2020/Ա-42 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի N 2 արձանագրության պատճենը,
- Անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

Առդիր՝ 4 փաստաթուղթ:

Հարգանքով՝

Տնօրեն՝ Տիգրան Աֆրիկյան

Digitally signed by AFRIKYAN TIGRAN 1912800128 Date: 2020.04.10 10:20:47 +04'00'

9 Alek Manukyan st, II-208 room, 0070, Yerevan Armenia
T: +37460 61 00 04 | info@peleka.am | www.peleka.am